ՀԱՇՏՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ

ք. Երևան **«12» սեպտեմբերի 2013թ.**

Հայաստանի Հանրապետության վարչական վերաքննիչ դատարանի վարույթում գտնվող թիվ ՎԴ/4710/05/12 վարչական գործով՝ ըստ հայցի «Ինֆորմացիայի ազատության կենտրոն» հասարակական կազմակերպության ընդդեմ Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության, Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության աշխատակազմի ղեկավար Արմեն Շահնազարյանի, Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության լիցենզավորման գործակալության պետ Կարեն Թամազյանի, Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության վերահսկողության տեսչության պետ Սոնա Ղարիբյանի (այսուհետ՝ **Կողմեր**)՝ իրավունքի խախտման փաստը ճանաչելու, տեղեկատվության տրամադրելուն պարտավորեցնելու և վարչական պատասխանատվության ենթարկելու պահանջների մասին, Կողմերը կնքում են հաշտության համաձայնություն (այսուհետ՝ **Համաձայնություն**) հետևյալի մասին.

1. «Ինֆորմացիայի ազատության կենտրոն» հասարակական կազմակերպությունը ամբողջությամբ հրաժարվում է սույն գործով ներկայացված իր բոլոր պահանջներից, իսկ Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարությունը պարտավորվում է Համաձայնության հիմքով թիվ ՎԴ/4710/05/12 վարչական գործի վարույթը կարճելու մասին դատական ակտի օրինական ուժի մեջ մտնելու օրվանից 10 (տասը) աշխատանքային օրվա ընթացքում «Ինֆորմացիայի ազատության կենտրոն» հասարակական կազմակերպությանը տրամադրել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության աշխատակազմի ֆինանսական վերահսկողության տեսչության և լիցենզավորման գործակալության աշխատակիցների եկամուտների համեմատական տվյալների մասին տեղեկանք:

2. «Ինֆորմացիայի ազատության կենտրոն» հասարակական կազմակերպությունը սույնով հավաստում է, որ դատավարության մյուս մասնակիցների նկատմամբ որևէ պահանջ չունի՝ բացառությամբ Համաձայնության 1-ին կետում նախատեսվածի:

3. Կողմերը սույնով հավաստում են, որ գիտակցում են Համաձայնության կնքման բոլոր դատավարական հետևանքները, այդ թվում՝ այն, որ թիվ ՎԴ/4710/05/12 վարչական գործի վարույթը կարճվելու դեպքում դատական ծախսերի փոխհատուցման պարտականությունը կրում է «Ինֆորմացիայի ազատության կենտրոն» հասարակական կազմակերպությունը:

4. Սույն Համաձայնությունը կնքված է 5 (հինգ) հավասար իրավաբանական ուժ ունեցող օրինակից: Կողմերից յուրաքանչյուրին հանձնված է մեկական օրինակ, իսկ հինգերորդ օրինակը հաստատման նպատակով պետք է ներկայացվի Հայաստանի Հանրապետության վարչական վերաքննիչ դատարանին:

5. Սույն Համաձայությունը ուժի մեջ է մտնում Կողմերի կողմից ստորագրման և Հայաստանի Հանրապետության վարչական վերաքննիչ դատարանի կողմից սույն Համաձայնության հիմքով թիվ ՎԴ/4710/05/12 վարչական գործի վարույթը կարճելու մասին դատական ակտի օրինական ուժի մեջ մտնելու պահից:

Կողմերի ստորագրությունները

Հայաստանի Հանրապետության
ֆինանսների նախարարություն
ք. Երևան, Մելիք Ադամյան 1
/ՀՎՀՀ 02528265 /
Նախարարի առաջին տեղակալ՝
ՊԱՎԵԼ ՍԱՖԱՐՅԱՆ

Աշխատակազմի ղեկավար՝
ԿԱՐԵՆ ԹԱՄԱՉՅԱՆ

Աշխատակազմի լիցենզավորման
գործակալության պետ՝
ՍԵՆԻԿ ՎԱՐԴԱՆՅԱՆ

Աշխատակազմի ֆինանսական
վերահսկողության տեսչության
պետ՝ ՍՈՆԱ ՂԱՐԻԲՅԱՆ

Կ.Տ.

«Ինֆորմացիայի ազատության կենտրոն»
հասարակական կազմակերպություն
ք.Երևան, Փ.Բուզանդի 1/3, 4 հարկ
/ՀՎՀՀ 02568394/

ՇՈՒՇԱՆ ԴՈՅԴՈՅԱՆ